

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր ըստին 2 կոպեկ:
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

24-րդ ՏԱՐԻ

24-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակւում է Թիֆլիսում, նոյն դիւրքով, նոյն պրօզրամայով և նոյն ուղղութեամբ: Մեր ստանում ենք սեփական հեռագրի ինքնը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ՌՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղրատայա և Բարձրակայա փողոցների անկիւն): Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armenien «MSCHAK».

Կէկէլ Նիկողայոսեան, Սերգէյ Գրիգորեան Ղարապետեան Ղարապետեան, Մարիամ Գրիգորեան և Ստեփաննոս Կարապետեան Ալաւիէրդեանցները՝ յաւօք արտի յայտնելով, առաջինը իր ամուսնու, երկրորդը և երրորդը՝ իրանց թանկագին հօր և վերջինը՝ իր անեղծ:

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ ՂԱՐԱՊԵՏԵԱՆ ՅԻ

մահը, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուզարկաւորութեանը, որ լինելու է ամսիս 21-ին, կիրակի օրը, առաւօտան 10 ժամին, իր սեփական տնից (Սոլոյակի, Բախչեմակայա փողոց, № 11), դէպի Զգրաշէնի Աւետեաց եկեղեցին և այնտեղից թօշխմանքի հանգստարանը:

Ամբիքը լինելու է շաբաթ, երեկոյան 6 ժամին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեռելութիւն է տօրում. Բաղրատայան աշխարհի վիճակը. Խաւարի իշխանութիւնը. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անպարտաւոր ժողովուրդը. Նամակ Մօսկվայից. Նամակ Նուխուց. Ներքին լուրեր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԵՅՐՈՒՆ

Տեղագրական, ազգագրական և վարչական տեսութիւն

VIII

Մեր անցեալ տեսութեան մէջ *) խօսելով Չէյթանի նախկին դաշնակցական կազմակերպութեան մասին՝ յայտնեցինք, որ Չէյթանցիները, չնորհա իրանց այդ կազմակերպութեան, մասնաւոր երկրի դիրքի, յաճախ պարզել են ապստամբութեան դրօշակը օսմանեան կտաւաքութեան դէմ, և ներկայ դարում ապստամբութիւն տեղի է ունեցել 4 անգամ—1819 թ. 1861—62 թ., 1872-ին և այժմանը, որ դեռ այս օրով չէ չարմանակվում է:

Հասարակութիւն չունենալով մանրամասն խօսել այդ ապստամբութիւնների մասին, այս անգամ մենք կը նկարագրենք Չէյթանցիների առանկին, կենցաղական կենսութեան, սովորութիւնները, վարք ու բարքը, նիստ ու կացը, որոնք ոչ նուազ հետաքրքրական են:

Մեր այս նկարագիրը հիմնված է անձնական ուսումնասիրութեան վրա, այլ մի քաղաածք է այն մի քանի հաղուածքներ գրուածներէն, որոնք տուել են մեզ մի քանի եւրօպական և հայ ճանապարհորդներ, գրուածներ, որոնք, որքան և անկատար ու թերատ՝ բայց դարձեալ կարող են մի ամփոփ գաղափար տալ այդ մի բուռն սլաւոնաբանութեան, բայց և նահապետական ժողովրդի վարած կեանքի մասին:

Մինչև վախճանական թուականները ոչ մի օտարազգի և օտարերկրեայ ճանապարհորդ չէր կարողացել մուտք գործել Չէյթանի մէջ. ան-

ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիֆլիսից. Նամակ Ամերիկայից. Նամակ Պարսկաստանից. Լէօն Բուրժուայի հաւոր. — ՀՅՈՒՆԳԱՐԻՆԻ. — ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զէյթուն:

կախ և զոյգ լեռնակամները խառն փակել էին օտարների առաջ իրանց սարերի և կիրճերի մուտքը:

Նոյն իսկ Վիկտոր Լանգլուան, որ առաջինը մի ընդարձակ հետազոտութիւն գրեց Կիլիկիայի մասին և 1852—53 թուականներին կատարեց մի ճանապարհորդութիւն այդ երկրում՝ Նապօլէօն III-ի հրամանով և հովանաւորութեամբ՝ հակառակ իր բուռն տենչանքի, չը կարողացաւ մուտք գործել Չէյթան: Ահա ինչ է ասում նա. «Մեր ճանապարհորդութեան առաջին օրը (Սիւրբ Ղուրս գալուց յետոյ) մօտեցանք մի հայազգի անկախ իշխանի կառավարներին, որին և յայտնեցի առաջ գնալու և մինչև Չէյթան մտնելու դիտաւորութիւն. բայց նա խորհուրդ չը տուէր ինձ, ասելով թէ իր ազգակիցները իրանց երկրի դռները փակում են որ և ինչ օտարականի առաջ, իսկ գաղափարով մտնելը վտանգաւոր է»:

Այս պատճառով Լանգլուան ստիպվեց իր տեղեկութիւնները Չէյթանցիների մասին քաղել չրջակայ բնակիչներից: Ահա մի քանի կտոր այդ տեղեկութիւններից:

«Չէյթանի հայերը կարողացել են միշտ իրանց ազգայնութիւնը պատուել տալ: Նրանք յարգում են իրանց մեծերին, հպատակում են իրանց օրէնքներին և շատ ամուր են իրանց հաւատի մէջ: Այդ մասին մի քանի նշանաւոր գիտնական են պատմում:

«Մի երկատար Չէյթանցի, լուսաւորական եկեղեցու կանոններին հակառակ, ամուսնանում է երրորդ աստիճանի իր մի ազգականուհու հետ և այս պատճառով բանադրւում է Չէյթանի կաթոլիկոսից: Երկատարը իրան եկեղեցուց դուրս արած տեսնելով կատաղում է և մի կիրակի առաւօտ, պատարագի ժամանակ, իր տան կարիճ ընկերներով, ոտքից մինչև գլուխ սպառազինված, մտնում է եկեղեցին, և այն միջոցին, երբ եպիսկոպոսը սեղանի աստիճաններով վեր էր բարձրանում՝ մօտենում է նրան և մահ սպառ-

ՄԵՌՆԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԻՐՈՒՄ

Գուցէ երբեք մեր գաւառական կեանքը այնքան մեռած, այնքան թոյլ և անշարժ չէ եղել, ինչքան այս ձմեռ: Գաւառի հասարակական կեանքի երեւոյթները չեն հետաքրքրում տեղական ինտելիգենցիային, չեն յուզում, չեն դրոշմ նրան դէպի ներգործական մի քայլ՝ տեղական հարցերի քննութեան և ածող լուծման համար:

Գաւառացին, հետաքրքրութիւն չը դրսնելով իրան շրջակա տղ երեւոյթների մէջ՝ աչքը դարձրել է դուրսը և այն տեղից է սպասում հետաքրքրութիւն և կեանք: Նա պահանջ է դրում ոգեւորութեան և յուզմունքների և սպասում է, որ մի ուրիշը իրան դրդի դէպի գործունէութիւն, մասնակից անելով հասարակական ընդհանուր ոգեւորչ գործի, և կապի գաւառական կեանքի արտայայտութիւնները աւելի լայն գաղափարական շարժումների և ոգեւորութեան հետ:

Սակայն մեր երկրի գաւառներում ցրված ինտելիգենտ մարդիկ մի սխալ են աւելում, սպասելով միմեանց և յոյս չունենալով մէկը միւսի վրա: Մեծ հասարակական առաջադիմութիւնը տեղի է ունենում միայն այնտեղ, որտեղ շատ մարդիկ են աշխատում, բազմաթիւ ոյժեր են գործակցում, ջանալով իր աշխարհի փոփոխութիւնները մայրենի կեանքի մէջ:

Խրաբանչիւր մարդ պէտք է իր շրջակա տղ կեանքի մէջ ամեն օր իրագործի հասարակական առաջադիմութեան պահանջները, որպէս զի կեանքը կարողանայ ժամանակի ընթացքում ենթարկվել բարեփոխութեան: Եւ երբեք չը պէտք է այդ ինտելիգենտը, այդ տեղական գործողը ի-

նում, եթէ իրան իսկոյն չարձակէ բանադրանքից:

«Չէյթանցիները առհասարակ բարձրասակ, բայց և աշխույժ քաւարութեան տէր մարդիկ են: Սրանից մի քանի տարի առաջ այս լեռնականները գետնաներ էին ուղարկել Կ. Պօլիս, որպէս զի իրանց և օսմանեան տէրութեան մէջ անկատար մնացած մի գործ աւարտեն: Բարեկամներէնց միւրը, որ առիթ էր ունեցել այդ լեռնականը գետնաներին անդամներին տեսնելու՝ ասում էր, թէ հազար Չէյթանցի կարող են ամբողջ Կարամանիան (Կիլիկիան) տախտակաւ անել, եթէ տիրապետութեան դիտաւորութիւն ունենան: Այս բանին, ուղիղն ասած, ես էլ եմ հաւատում: Այժման հանգամանքներին նայելով՝ ներքին ինձ կատարեալ ազատութիւն մաղթել Տաւրոսի հայերին, որոնք մարտնչական հետ Արեւելի Փրանսիացիներն են»:

Մի այլ օրինակ:

«Սարաւիկի կերպով հայածում են ուրացողներին: 1845 թ.ին մի քանիսն հակառակութեամբ ուրացել էր հաւատը և ընդունել իսլամ. Չէյթանցիք մորթաղքեմ անելով նրան, կենդանւոյն այրեցին և առանց քաջվելու պատմում էին այդ անեղ տեղը»:

Սակայն 1864 թ.ին մի Փրանսիացի ճանապարհորդի աջողվեց մտնել Չէյթան և մնալ այնտեղ երեք օր, յունիսի 27—29: Այս ճանապարհորդին աջողվեց այն պատճառով, որ 1862 թ. մեծ ապստամբութեան ժամանակ, երբ Չէյթանցիները պատգամաւորութիւն ուղարկեցին Պարսիկ Նապօլէօն կայսրի մօտ, պատգամաւորներից միւրը, Գրիգոր վարդապետ Արարատեան, շատ չնորձ տեսած լինելով Նապօլէօնից՝ յանձն առաւ Փրանսիացի ճանապարհորդին տանել Չէյթան, ի նշան երախտագիտութեան: Ճանապարհորդը, որ լոկ մի տուրիստ էր, նկարագրել

*) Ճանապարհորդութիւն վ. Լանգլուայի:

րան մենակ զգայ: Նա այդ զգացմունքը պէտք է իրանից դուրս լսի առ միշտ: Նա մենակ չէ և մենակ չէ կարող մնալ: Եթէ այսօր նա չէ լսում իր շուրջը համակրող համակոհ ձայներ՝ նա կը լսի վաղը: Եթէ այսօր նա տեսնում է խոչընդոտներ, նոյն իսկ ծաղր և հալածանք՝ վաղը նա կը տեսնի շնորհակալ և համակրող դէմքեր: Եւ վերջապէս, նա մենակ չէ, որովհետեւ երկրի մասերում ցրված ինտելիգենտ կուլտուրական ոյժերը կապված են առաջադիմութեան և գաղափարական զարգացման իրեաներով:

Եւ իսկպէս միայն այդ բազմաթիւ, բազմաբան առաջադիմական շարժումն է իրական առաջադիմութիւն: Գաւառների, գիւղերի մէջ ցրված կուլտուրական բարեփոխութիւնները, միանալով միմեանց հետ և ոգեւորվելով ընդհանուր գործակցութեան և փոխադարձ օգնութեան գաղափարով՝ միայն և միայն ընդունակ են ամբողջութիւն և հաստատութիւն տալ երկրի և ժողովրդի առաջադիմութեան:

Միջին դարերում նոյն իսկ երբեմնայէս փայլում էին արտակարգ հանճարներ, մարդկային մարքի հակներ, սակայն ընդհանուր կեանքը մնում էր անմխիթար, անշարժ վիճակի մէջ և չէր բարեփոխվում: Միայն այժմ, երբ լուսաւոր մարդկութիւնը աշխատել է գործող տարր շինել ամբողջ ժողովուրդը, երբ ժողովրդի բոլոր խաւերում խորշեր են ստեղծվել առաջադիմութեան համար՝ ամեն մի նոր փրկարար միտք, մի նոր կատարելագործութիւն, արձագանգ են գտնում մարդկութեան բազմաթիւ շրջաններում և իրական բարեփոխութիւններ են արդիւնաբերում կեանքի մէջ:

Ե իր տպաւորութիւնները, որոնք իբրեւ անմխիթական տպաւորութիւններ, ի հարկէ, մեծ գին և արժէք ունեն: Հայր Ալիշան իր Սիւտանի մէջ թարգմանած լինելով այդ ճանապարհորդութեան նկարագրութիւնը՝ մենք ես առաջ կը բերենք այստեղ քաղուած օրէն:

«Մի քանի ընկերներով, սպասուորներով, երկու թիկնաւորներով, որ տուել էր Մարաշի կուսակալը և մի 16-ամեայ պատանի թարգմանի հետ, որ լաւ գիտէր լեզուները, ուղևորվեցինք դէպի Չէյթան: Մի քանի ժամից յետոյ երբ նստած մի ձորում՝ հանգստանում էինք, դիմացի բարձրաւանդակի վրա 12 զինված լեռնականներ երևացին, բայց որովհետեւ հրացանները ձգված էին կոնտակտի, իսկոյն խնայեց, որ բարեկամներ են և ոչ թշնամիներ: Նրանք արագ իջնելով Չէյթանի իշխանների կողմից մատուցին ողջոյն և հրաւեր, և յայտնեցին, որ ուղարկված են ուղեկցելու հիւրերին: Բոլոր այդ լեռնականները երիտաւորներն էին, ամենամեծը 25 տարեկանից աւել չէր, ամենքի դէմքը բայց համարձակ, կռիւտ, սիրուն, մենք դժուարանում էինք երեսակայել, թէ մարդ կարող է որ և է վտանգի ենթարկվել նրանց կողմից առանց պահակախմբի: Եւ որովհետեւ այդ լեռնականները շատ հոշակված են զիպածից հրացանաձուլութեան մէջ, ուստի կամենալով փորձել մեզ ճանապարհորդներին՝ մի փոքր քար գրկի հետ տուել և խառնացան դիպչողին մի մէջիտից տալ, ոչ որ մեղանից չը կարողացաւ դիպչել. բայց Չէյթանցիների հրացանաձուլութեան եղանակը շատ նշանաւոր երևաց մեզ, որովհետեւ նրանք կատուի պէս մաղցում են ծառի վրա, թաղանթվում են տերեւների մէջ, յետոյ են հրացանը մի ձիւղի վրա, և ուղիղ արձակում են:

«Նրանց երկրի նման գեղեցիկ երկրի չը կայ: Մեծամեծ սոճիներ, աճալիս օստիներ, դալար կաղնիներ հաճելի կերպով հանգստութիւն են տալիս աչքերին, օձի նման գալարվող վտակներ,

Մեր յայտնող և վերջին յօդածը նուիրված է
լինի Զէյթունի ժողովրդի ազմեան սուրբ
թիւնների, կենդաշի նկարագրովեան, և նրան
էլ կը վերջանայ մեր տեսութիւնը Ալիւիայի
Զէյթունի մասին:

տղայ և 5 աղջիկ, որոնք լեհացի ազգովի են և պատկանում արհեստագործների և հասարակ բան-
ւորների երեխաներ են: Պ. մինիստրը բացա-
րուում է, որ եթէ կովկասեան ուսումնարանա-
կան չըջանում ուրիշ տեղեր էլ կան այնպիսի
զարգացներ՝ դարձեալ պիտի յանձնուին ուսումնա-
րանական վարչութեան:

Աջի առաջ ուսնալով, որ սիֆիլիսը սաստիկ տարածվում է Ռուսաստանի գաւառնե-
րում և որ նրա դէմ գործ դրված միջոցները թոյլ են և անկարգ: Կառավարութիւնը նպա-
տակալարմար է համարել այս տարվայ նոյեմբեր
ամսին բժիշկներին մի յառուկ ժողով հրաւիրել՝ քննելու սիֆիլիսի տարածման դէմ
մաքաւելու միջոցները: Այս ժողովի ծրագիրը և
նրա պարասպմունքների ձևը մշակելու նպատա-
կով կազմվել է Պետերբուրգում մի նախա-
յատարանական յանձնաժողով բժշկա-
կան դեպարտամենտի գիրկէն: Բազմաթիւ նա-
խագահութեամբ: Յանձնաժողովը այժմ հաւա-
քում է բոլոր մինչև այժմ յայտնի նիւթերը այդ
խնդրի մասին: Հաստ յարմար առիթ է կովկա-
սեան մեր բժիշկների համար՝ ներկայացնելու
մինիստրութեան այն սղբալի վիճակը, որի մէջ
գտնվում է և մեր երկիրը սիֆիլիսի վերաբե-
րութեամբ: Գաւառը ճանաչողները լաւ գիտեն,
որ սիֆիլիսը մեծ ծաւալով տարածվում է մեր
գիւղերում:

Վաղը, յունվարի 21-ին, ժամը 1-ին, Թիֆլիսի
բէշալական դպրոցում կը կայանայ այդ դպրոցի
տարեկան ակումբ: Դպրոցի վերատեսուչ Տիրու-
տինը կը կարգաւ 1894/5 ուսումնարանական տարվայ
համառօտ հաշիւը, իսկ պատմութեան ուսուցիչ
Գուլաձէն կը կարգաւ մի բէֆիշտտ «Ֆրանկո-
ուսական դաշնակցութեան պատմութեան տե-
սութիւնը» վերնագրով: Հանդէսին կարող են
ներկայ լինել և կողմնակի անձինք:

Երեւանի մէջ գրում են, «Երեւանից ելող
պատկանաւ աշխատային են, եկած ձիւնը
անխիտաւ հալվում է, իսկ շատ անգամ անձրև
է գալիս, կտուր չը կայ որ չը կաթի, կաթիլու
պատճառով դպրոցները, գիմնազիան նոյն իսկ
երբեմն արձակվում են: Օղը մոսայ, խոնաւ,
փողոցները միշտ ցեխ»:

Մեզ գրում են Երեւանի մէջ, «Փանի մի օր ա-
ռաջ Գալանեան օրիորդաց դպրոցի կար ու
ձիւ բաժնում վառարանից կրակ առաջացաւ, որ
և հանգրեցեցին, սակայն վնասը մի երկու հարիւր
րուբլու կը հասնի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Новости» թղթակիցը Կ. Պոլսից գրում է,
«Սուլթանը, որ ամբողջ ժամանակ յետաձգում
էր, յանկարծ վճռեց կազմել մի յանձնաժողով
օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներին,
առանց կրօնի խտրութեան, օգնութիւն հաւ-
ցնելու համար: Սուլթանը յոյս ունի, որ Վիկտոր-
իա թագուհին երախտագէտ կը լինի իրան այս
պատճառով:

«Kölnische Zeitung»-ի ասելով թիւրքաց բե-
գիֆ զօրքից շատերը սկսել են փախուստ տալ
պաշարի պակասութեան պատճառով, վախենա-
լով սովից:

Կ. Պոլսից գրում են «Новости» լրագրին,
«Այստեղ սկսել են զարմանալ և յուզվել, որ
Լօնդոնում մինչև այժմ յապաղում են ընդունել
թիւրքաց դեսպանի ներկայացուցչական թղթե-
րը: Արդէն դիմել են և խորհուրդ հարցրել Լօն-
դոնի ուսուցչի գեղական Ստապլից, որ՝ զիւլիան-
տիական մարմնի առաջագոյն անդամն է, զիմել
են հարցմունքով մինչև անգամ Սանդերսոնին,
«Foreign office»-ի պաշտօնակալին, բայց այդ ա-
մենը ոչ մի գրական հետեանք չէ ունեցել: Կարճ
խօսելով՝ պէտք է սպասել: Իսկ թագուհին,
զբաղված լինելով իր թոռան, գերմանական
կայսրի հետ ունեցած գետնաբանութիւնով, ըստ երե-
ւոյթի, չէ շտապում: Սուլթանը սաստիկ վերա-
ւորված է այն բանից, որ նրա ներկայացուցչին
հարկադրում են սպասել, մինչև թագուհին կը

բարեհաճէ ընդունել նրան: Այս բոլորը ոչ մի
նշանակութիւն չէր ունենայ՝ եթէ սուլթանը ա-
ռաջաց այնպէս խիստ կերպով վերաւորված չը
լինէր լորդ Սուրբիւրից: Այս պատճառով սուլ-
թանը այժմ շատ զգայուն է Անգլիայի կողմից
արտայայտված քաղաքավարութեան ամենափոքր
թերութեան:

Նրա չըջալատողներն էլ աւելի ուռցնում են
դէպքը, հասկացնելով սուլթանին, թէ Սէն-Ջեյմսի
կաթնէնտը դիւմամբ վերաւորանք է հասցնում
նրա ներկայացուցչին: Անշուշտ, այդ յապաղման
այս տեսակ նշանակութիւն տալը ներքնական է
հարմարիայից, թէն ինչու կարելի է բացատրել
նրանով, որ թագուհին Սուրբուրից է գտնվում:
Չը պէտք է մոռանալ, որ Վիկտորիա II սուլթանի
կողմն է բռնում: Կայսրը մինչև այժմ չէ կարող
մոռանալ Սուրբիւրիցի առած խօսքերը և, որով
հետև անպիտանները այժմ, (նախագահ Կրիզ-
լին ուղարկած հեռագրից յետոյ), բացարձակ
յայտնում են, թէ Վիկտորիա II-ը ջղային ցնցումի
աղբեղնութեան տակ է գործել՝ ուստի կայսրը
վրէժխնդիր է լինում նրանցից, զինուորներով
սուլթանին Անգլիայի դէմ:

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑԻՑ

Կ. Պոլսի, 9 յունվարի:

Նախորդ նամակս թղթատուն յանձնած էի,
երբ նոյն օրը Քաղաքական և Կրօնական ժողով-
ները գումարում էին Պատրիարքարանին մէջ՝
խորհրդակցութիւններ ընելու համար պատրիար-
քին պաշտօնավարութեան դէմ նիւթում դաւե-
րուն մասին: Խղճիւրեան պատրիարքը, որ ներկայ
էր ժողովին բացումին, յայտարարեց, թէ ինչ ինչ
չըջանալներու մէջ պահանջած են որ հրաժարի
պատրիարքութեան: Ինքը, ազգին կողմով ընտ-
րուած, մինչև հիմակ աշխատած է իր իրաւասու-
թեանը սահմանին մէջ պաշտպանել իր հօտին
իրաւունքները, չի կրնար երբեք տեղի տալ
անոնց, որոնք ազգին ձայնով չէ որ կը պահան-
ջեն իր հրաժարականը, սիրով պատրաստ է
համակերպելու ազգին ամէն տնօրինութիւննե-
րուն:

Այս յայտարարութեան ետքը պատրիարքը ժո-
ղովարահէն դուրս ելաւ, ժողովականներուն
թողնելով խորհրդակցութիւններ կատարել այս-
քան կենսական խնդրի մը վրա: Մէկ երկու ժամ
ետքը ժողովականները ամենքը մէկ պատրիարքին
սենեակը կերթալին, յայտարարելու թէ բոլոր
ազգը դո՛ւ է իր պաշտօնավարութեան, թէ չեն
կրնար ընդունել հրաժարականը և թէ պատրիար-
քը պէտք է շարունակէ իր արդիւնաւոր պաշտօնը:
Թէ ինչպէս խորհուրդ է պատրիարքը վար
առնելու կամ «կարգի բերելու» մեքենայութիւնը՝
այս խնդրին վրայ կարելի եղած է աւելի ման-
րաման տեղեկութիւններ քաղել: Յայտնի չը-
ջանալներու ցնորքներէն մէկն էր հայոց պատ-
րիարքը խոնարհեցնել, սակայն Խղճիւրեան գրե-
թէ զիցաղնական դուռնաբանութեամբ պտտե-
ցաւ մինչև վերջ՝ այն ծուղակներուն շուրջը դուրս
կը լարէին անոր առջև մէկ կողմէն մերթ
սպառնալից ճնշումները և միւս կողմէն հայ
եկեղեցիներու, էֆէնդիներու կեղծաւոր քննա-
դատութիւնները: Խղճիւրեան յաղթական է և կը
մնայ մինչև վերջ: Ինչ ընել ձար մը պէտք է,
ու ահա երևան կ'ելլէ Խղճիւրեան պէյ, սիւրիայի
նախկին նախագահ առեւտրական բարձր ժողովին,
կը խոստանայ Հայոց պատրիարքը վար առնել
կամ հաշտեցնել այն հայ էֆէնդիներուն միջոցաւ,
զորս շատ լաւ կը ճանչնար Քրիստոսը: Արքայա-
մարտի, Խայկեան, որուն տղան Արքայաժողովի
աղջկան հետ ամուսնացաւ վերջերս, Նուրեան
Յովհաննէս, Գաբրիէլ Նուրառնիկեան ևն:

Եթէ Արքայաժողովի պատրիարքը համոզելու
իրեն յանձնուած պաշտօնը կատարեալ անհոգե-
թեամբ և անտարբերութեամբ կը կատարէ,
առանց գիտնալ թէ ինչ կանցնի կը դառնայ
միևնոյն բանը պիտի չկրնանք ըսել Նուրեանի,
Խայկեանի, Նուրառնիկեանի, Յովհաննի և ի-
րենց նմաններուն համար: Տարիէ մը աւելի է
որ ազգը զիրենք վնասած էր գործերէն, հիմակ
առիթը կը գտնեն վրէժ լուծելու. ամէն տեսակ
կեղտոտ գաղափար կը տարածեն ժողովրդին
մէջ պատրիարքին պաշտօնավարութեան դէմ,
պատրիարքին ընթացքը կը պախարակեն:

Խառն ժողովին ըրած յայտարարութեան իսկը
պատրիարքին դէմ եղած փորձերը սկսան աւելի
թուլնալ: Միևնոյն առջի օրը Պատրիարքարան

եկան Արքայաժողովի, Նուրեան, Նուրառնի-
կեան և Տիւրքեան, երեք ժամի չափ առանձին
տեսակցութիւն ունեցան պատրիարքին հետ. խո-
սակցութիւնը թէպէտ չենք գիտեր՝ սակայն նիւ-
թը կարելի է գուշակել: Պատրիարքին բոլոր
մէկնեղէն ետք՝ Արքայաժողովի իր չըջանալնե-
րուն մէջ մէկ երկու տեղ ըսած է. «Հայոց
պատրիարքը կատարեալ սուրբ մըն է»:

Միևնոյն երկրորդ օրը պատրիարքը ընդունեց
պաշտօնական ժողովներուն և ուրիշ ազգայիննե-
րուն: Միևնոյն օրին շնորհաւորութիւնները:
Պատրիարքը չեւր օրհնութիւններ տուաւ ամեն-
քին, ներկաներէն ճանքման Պ. Մկրտիչ ամենուն
կողմէն սղծելով ատենախօսութիւն մը ըրաւ
պատրիարքին ուղղուած, իմաստը կը համառօտեմ:

«Հայ ժողովուրդը երկու շաբաթէ ի վեր
ցաւով ճանդիսատես կըլլայ խմբակի մը դաւա-
դրութիւններուն, անոնք կաշխատեն ձեր սրբազ-
նութիւնը հրաժարեցնել: Բոլոր ազգը, մեր կի-
նըրը, դաւանները, աղջիկները ու թոռները,
ամենքն ալ կը սիրեն ու կը յարգեն ձեր սրբազ-
նութիւնը, քան են ձեր պաշտօնավարութեան
զօր մինչև հիմակ վարած էք անշահախնդրական
առաքինութեամբ, զուր մեղի, հայերուս, պատ-
րիարքն էք, իսկ անոնք որ դաւեր կը լարեն
ձեզի դէմ՝ անոնք հայ չեն, մենք վտարած ենք
զիրենք մեր չըջանալէն, անոնք ալ ևս չեն մեր
հայրերը, եղբայրները, գաւառները»:

Պ. ճանքմանի խօսքերուն խանդավառու-
թեամբ ձայնակցեցան բոլոր ներկաները:

Հայ կաթողիկոսներու պատրիարքը, Աղաբեան,
որուն հետ երկուր ժամանակէ իսկ իրաւ իրաւ
ամեն յարաբերութիւն իրարմիջեան պատրիարք,
այս օրերս սկսած է մօտենալ հայոց պատրիար-
քարանին:

Միևնոյն առջի օրը Աղաբեան իր փոխանորդը
և գործակալորդը զրկած էր, Միևնոյն օրը
շնորհաւորելու համար Խղճիւրեան պատրիարքը
պէտք եղած ընդունելութիւնը ըրաւ Աղաբեանին
ներկայացուցչներուն: Չենք գիտեր սակայն թէ
Խղճիւրեան, իր փոխանորդը զրկելով փոխադար-
ձաբար, պիտի բաջալերէ Աղաբեանին մերձեա-
լու ձգտումը:

Վահէ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

«Orinoco» չափնաւ, Ատլանտիան Ովկիանոսի վրա
1895 թ. դեկտեմբերի 15/27-ին
Ալեքից գրած մասնաւոր նամակներէց մինի
մէջ ևս առիթ ունեցաւ ձեռ հաղորդել, որ Բեր-
լինի դրամատէրերի մի խմբի յանձնարարու-
թիւնը ընդունելով՝ եւ վճռեցի մի քանի ամսով
գնալ հարաւային Ամերիկա՝ իւր ձեռքով յանձնա-
րարութեան նպատակն է՝ հետազոտել բրիտա-
նական Գուլանայի մէջ գտնվող սուր հանքերը,
որ յիշված գումարատէրերը դիտաւորութիւն ու-
նեն մշակել ինչ ինչ զեկուցումը նպատաւոր
լինի:

Մինիստրութիւնից արձակուրդ ստանալով ձը-
մեղով վեցամեակի մնացորդը համար և դատա-
խօսութիւններս յանձնելով նախկին աշակերտնե-
րից մինին, որ նորերս ընդունվեցաւ մեր բազ-
մարուստեան բարձրագոյն դպրոցից իբրեւ սլի-
վատ-բոցէնտ՝ եւ ամսիս 15-ին թողի Ալեքի և ու-
ղիտիցայի դէպի Լօնդոն, ուր երկու օր անցկա-
ցրի, նուիրելով ամբողջ ժամանակ ճանապարհոր-
դութեան համար պատրաստութիւններ անելու:
Այս էր պատճառը, որ եւ միջոց չունեցայ տես-
նել հայոց հարցին Նուիրեան զործիչներից և ոչ
մինի հետ, և որ միայն հետանալով Լօնդոնից,
ամսիս 18-ին, առաւօտը հրատարակված լրագրի-
ներից տեղեկացայ, որ նախկին օրը, այսինքն
17-ին մի մեծ միտինգ կայացաւ հայոց հարցի
առիթով: Ոչ է այժմ դրա մասին տեղեկութիւն-
ներ տալ, որովհետեւ դուք ինձանից մօտ կրմա-
նաք թէ այդ միտինգին վերաբերեալ վարձատա-
նութիւնները, թէ նրա հետեանքները: Բայց սրա-
նից իմ հարկադրածներն էլ ուրիշ բան չէին լինի՝
ալ միայն քաղաքական լրագրիչներից:

Ամսիս 18-ին թողնելով Լօնդոնը առաւօտեան
ժամը 10-ին, արդէն 11 1/2-ին Սաութհամթոն (South-
hampton) էինք հասել և իսկոյն կարողացանք
անցնել դէպի չափնաւ:

Շողոմաւի անունը «Օրինոկո» է, նա պատկա-
նում է մի ընկերութեան, որ մասնաւորապէս հա-
րաւային Ամերիկայի զանազան մասերի հետ եր-
թեկութիւն է պահպանում, պատասխաններ և

փոստն է տանում: Այդ ընկերութիւնը անուան-
վում է Royal mail steam packet Company,
(այսինքն թագաւորական փոստային նաւերի ըն-
կերութիւն) և դէպի բրիտանական Գուլանա եր-
կու շաբաթ մի անգամ մի չոգենաւ է արձակում:
Սաութհամթոնից դէպի Ովկիանոսի ափին գտնվող
բրիտանական Գուլանայի մայրաքաղաքը, Ջորջ-
տաունը (Georgetown) հասնելու համար չոգենա-
ւը գործ է ածում 14 օր, և այս ամբողջ ժամա-
նակամիջոցում միայն մի տեղ, Բարբադոս (Bar-
bados) կղզու մօտ է կանդ առնում 12 օրվայ
անընդհատ ճանապարհորդութիւնից յետոյ:

Այն կողմերը, ուր ինձ հետեալ ամիսներին
վիճակված է գործել, մինչև անգամ աշխարհա-
գրութեան հմուտներին այնքան ծանօթ չեն, այն-
պիսի երկիրներ չեն, որոնց հետ մնացած աշ-
խարհը յաճախ յարաբերութիւններ է պահպա-
նում, ուրեմն զարմանալի չէր լինի, եթէ «Մշա-
կի» ընթերցողներից շատերը զբաղեց մասին մի-
այն անկատար հասկացողութիւն ունենային: Ես
ինքն էլ մինչև վերջին ժամանակներս, երբ ինձ
տրվեց յիշված յանձնարարութիւնը՝ շատ քիչ էի
կարողացել Ամերիկայի այս տեղերի մասին, և այժմ
էլ, երբ ճանապարհորդութեան պատրաստվելով
զբաղվածանքին պիտի պատուիրէի հասցնել
ինձ Գուլանային վերաբերեալ գրքեր՝ նկատեցի,
որ այս երկրների մասին գրականութիւնը չառ-
փոքր է, աշխարհայոցները (բարեհաճեցե՛ք) շատ
սակաւաթիւ և անկատար են: Ես կարող եմ ու-
րեմն ասել, որ մի անձանօթ երկիր եմ գտնում,
որի մասին կան մի քանի տեղեկութիւններ, բայց
որ հետո է մանրամասնաբար հետազոտված լի-
նելուց:

Նախ քան հաղորդեմ մի քանի իրողութիւններ
Գուլանայի մասին՝ կը յիշեմ մի ժամանակա-
կից երկայնի, որի վրա «Մշակի» ընթերցողները
գուցէ արդէն ուշադրութիւն դարձրին, այն սահ-
մանային վէճը, որ արդէն մի քանի ամիս է որ
ծագել է Վենէցուէլայի հանրապետութեան և Անգ-
լիայի մէջ: Վէճը իսկապէս վերաբերում է բրիտա-
նական Գուլանային և դրա տնօրին այն է, որ իսկ
այդ կողմերը, որտեղ սահմանը անորոշ է՝ ոսկու
բաւական հարուստ հանքեր են գտնվել: Վէճե-
ցուէլան, հարաւային Ամերիկայի մնացած հան-
րապետութիւնների պէս, փողի միշտ կարօտ,
միշտ պարտքերի ծանր ճնշման տակ գտնվելով՝
որովհետեւ բարձր պաշտօնականները պետական գան-
ձ իրանց սեփականութիւն համարելով դրան ան-
դադար թէթեկացնում են, — ի հարկէ կը ցանկա-
նար սահմանի վրա գտնվող և եկամուտներ խոս-
տացող երկրները դրաւել: Իսկ Անգլիան իր
կողմից էլ սովոր չէ անտես առնել իր նիւթա-
կան օգուտները, ուրեմն հարկատու չէ համարում
զիջումն անել Վենէցուէլային: Նպատակ կար եր-
կու պետութիւնների մէջ մի միջնորդ կարգել,
և առաջարկութիւն կար, որ այդ միջնորդը Միա-
ցեալ Նահանգների նախագահ՝ Արիվինգը լինի:
Բայց մինչդեռ ոչ մի վճիռ չէին հասնում երկու
թշուառի կուսակցութիւնները՝ Արիվինգը նախա-
գահը ինքն խառնվեց գործի մէջ, հրատարակե-
լով, որ Մօնթեյի ուսման (քոլտրինային) հակա-
ռակ կը լինէր եւրոպական մի պետութեան ին-
տէրեսները պաշտպանել ի վնաս ամերիկական մի
պետութեան, որովհետեւ Ամերիկեան ամերիկացի-
ների համար է: Արիվինգը ի հարկէ առաջ է
բերում իր համազմունքը՝ միայն այն նպատա-
կով, որ եկող ընտրութիւններին կուսակցիցներ
գրաւի իր կողմը, դառնալով ամբողջ Ամերիկայի
օգուտների պաշտպան:

Անգլիայում այդ շատ լաւ հասկացան, և լորդ
Սուրբիւրի իրան յատուկ վճռական լեզուով հա-
կանալ տուեց, որ այն ձևով, ինչպէս այդ ուղում
է անել Արիվինգը՝ Անգլիան թոյլ չի տայ խառ-
նվել իր գործերի մէջ: — Գուցէ տեղ հասնվելու
և այս վէճի մասին մանրամասն տեղեկանա-
լով, կը հաղորդեմ «Մշակին»:

Այս նամակս եւ միայն կարող կը լինեմ
ուղարկել Բարբադոս կղզուց, ուր յոյս կայ կը
հասնենք չորս օրից յետոյ: Միջոց գրեթէ ամբողջ
ժամանակ անհանգիստ էր, և մենք երեք մի
օրով կուշանանք, փոխանակ ամսիս 30-ին՝ մի-
այն 31-ին կը հասնենք: Իսկ Ջորջտաուն կը
լինենք ոչ թէ նոր տարվայ օրը, ինչպէս եւ յոյս
ունէի, ալ յունվարի երկուսին:

Ա. Արմաուր

(№ 22) 22—30